ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.07.2013թ.
205-ի 7

ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
պետ պարոն Արմեն Գեւորգյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գեւորգյան,

Մեզ է դիմել ՀՀ քաղաքացի Մանե Մադոյանը եւ խնդրել է օգնել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: Նա 2013թ.-ի հուլիսի 16-ին նա տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ եւ խնդրել էր տրամադրել “Երիտասարդներ երկիր” առողջապահական եւ “Արբանյակ” իրավապաշտպան ՀԿ-ների վերաբերյալ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տնօրինության տակ եղած տեղեկությունները, ինչպես նաեւ “Երիտասարդներ երկիր” առողջապահական եւ “Արբանյակ” իրավապաշտպան ՀԿ-ների կանոնադրություններ պատճենները:

Սակայն, մինչ օրս Մանե Մադոյանը պատասխան չի ստացել:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկութոյունները.

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց ***հետո 5-օրյա ժամկետում:*** Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան